ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԺԱՄԸ 11-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- Արմավիր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանի
- Վաղարշապատ համայնքի ղեկավարի
- առաջին տեղակալ՝ Արսեն Պետրոսյանի
- Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի
- Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի
- Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի
- Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի
- Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի
- Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Ֆելիքս Պողոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզի դատախազ՝ Վահան Սարգսյան
- ՀՀ ԱԱԾ Արմավիրի մարզային վարչության պետ՝ Ռաֆիկ Բոխյան
- ՀՀ ՆԳՆ Արմավիրի մարզային վարչության պետ՝ Արթուր Բդոյան
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի պետ՝ Արսեն Խաչատրյան
- ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիր>> ՋՕԸ-ի
- գործադիր տնօրեն՝ Վահագն Արշակյանի
  ՀՀ Արմավիրի մարզի <<Շենիկ >> ՋՕԸ-ի
  գործադիր տնօրեն՝ Սամվել Սարգսյանի
- ՀՀ Արմավիրի մարզի <<Էջմիածին >> ՋՕԸ-ի
  գործադիր տնօրեն՝ Նվեր Պետրոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի մարտի 29-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
Հ Հ Արմավիրի մարզպետ/

2. Գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների ընթացքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում

/ Արթուր Այվազյան –ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /

3. Ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում

/ Վահագն Արշակյան– ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիր>> ՋՕԸ–ի
գործադիր տնօրեն
Սամվել Սարգսյան–ՀՀ Արմավիրի մարզի <<Շենիկ >> ՋՕԸ–ի
գործադիր տնօրեն
Նվեր Պետրոսյան–ՀՀ Արմավիրի մարզի <<Էջմիածին >> ՋՕԸ–ի
գործադիր տնօրեն/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2023 թվականի առաջին եռամսյակի բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման և այդ ուղղությամբ համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ

/Վարազդատ Մկրտչյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ/

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2022 թվականի սոցիալ–տնտեսական զարգացմանն ուղղված տեղական ծրագրերի կատարման և 2023 թվականի նախանշված ծրագրերի ընթացքի մասին

/ Արմավիր համայնքի ղեկավար– Դավիթ Խուդաթյան,
Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ –Արսեն Պետրոսյան,
Մեծամոր համայնքի ղեկավար– Վահրամ Խաչատրյան,
Արաքս համայնքի ղեկավար– Ղազար Ղազարյան,
Խոյ համայնքի ղեկավար– Արգիշտի Մեխակյան,
Փարաքար համայնքի ղեկավար– Դավիթ Մինասյան,
Բաղրամյան համայնքի ղեկավար– Շանթ Առաքելյան,
Ֆերիկ համայնքի ղեկավար–Ռուստամ Հասանյան/

6. Հայաստանի Հանրապետության դատախազության Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազի 2023 թվականի փետրվարի 13–ի թիվ

68/3301-23 գրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ ուղարկված միջնորդագիրը քննարկելու մասին

/ Անդրանիկ Լալայան –ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ /

7. Հողօգտագործման և ընդերքօգտագործման բնագավառներում ՀՀ Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների, ինչպես նաև իրավապահ և ոլորտներում ներգրավված իրավասու մարմինների համագործակցության մասին

/Վահան Սարգսյան – ՀՀ Արմավիրի մարզի դատախազ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ողջունելով նիստի մասնակիցներին, մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի մարտի 29-ի նիստի օրակարգը:

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի խորհրդի

Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի մարտի 29-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12-րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի մարտի 29-ի նիստի օրակարգը**:

Օրակարգային երկրորդ՝ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը ներկայացրեց գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների ընթացքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում: Նա տեղեկացրեց, որ 2023 թվականի գարնան նախապատրաստական աշխատանքներին մարզպետարանը, մարզի համայնքները, ջրօգտագործողների ընկերությունները, տնտեսավարող գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները և ֆերմերները սկսել են դեռևս 2022 թվականի նոյեմբեր – դեկտեմբեր ամիսներից՝ մարզի զարգացման գերակա ուղղությունները և առաջնահերթ խնդիրները լուծելու նպատակով համապատասխան ծրագրերի մշակմամբ: Որպես բուսաբուծական ուղղվածության մարզ՝ դեռևս ձմեռվանից կարևորվել է գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական փուլը՝ նպատակ ունենալով ամուր հիմք ստեղծել բերքառատ տարվա համար: Որպես ձեռքբերում անհրաժեշտ է արձանագրել այն կարևոր փաստը, որ տարեց – տարի փոխվում է մարզի հողօգտագործողների հոգեբանությունը, նրանք դառնում են ավելի ինքնուրույն և նախաձեռնող:

Ագրարային ոլորտում տնտեսավարող սուբյեկտները պետական ընդհանուր ծրագրերի շրջանակում ինքնուրույն են լուծում իրենց տնտեսության հիմնախնդիրները, աստիճանաբար վերանում է նրանց կախվածությունը պետական համակարգից և տեղափոխվում են շուկայական հարաբերությունների ոլորտ:

Վերջին տարիներին գարնանային հրատապ աշխատանքների իրականացման շրջանակներում մարզում առաջնային տեղ է գրավում մարզի տարածքում գետերի

գարնանային հեղեղումների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպումը: 2023 թվականին գարնանային հնարավոր հեղեղումների հետևանքները ժամանակին և արդյունավետ մեղմելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը ուսումնասիրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Քասախ, Մեծամոր գետերի հեղեղատարների ափապատնեշների փաստացի վիճակը, առաձնացվել են առաջնահերթ մաքրման ենթակա տարածքները, որոնք ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ ջրային կոմիտե: Մարզի գյուղատնտեսական արտադրության զարգացմանը նպաստող կարևոր բնագավառ է հանդիսանում ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցման, հողերի կրկնակի աղակալումից և ճահճացումից պաշտպանվելու նպատակով կոլեկտորադրենաժային համակարգի անխափան գործունեության ապահովումը: 2023 թվականին նախատեսված է մարզի Ջրառատ, Արազափ,Հայկաշեն, Վարդանաշեն, Գայ և Գրիբոյեդով բնակավայրերում մաքրել 30456 մ երկարությամբ բաց դրենաժային համակարգ:

Մարզում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման շարքում՝ որպես արհեստական ոռոգվող երկրագործության տարածք, առաջնահերթ նշանակություն ունի ոռոգման համակարգերի մաքրման և վերանորոգման աշխատանքների իրականացումը: Ներկա իրավիճակը պահանջում է ոռոգման համակարգը սպասարկողներից և ջրօգտագործողներից առավել կազմակերպված ու բարեխղճորեն կատարելու համակարգի կառուցման, մաքրման և վերանորոգման աշխատանքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը, կորուստները հասցնելով մինիմումի:

Ոռոգման համակարգերի կառուցումը, պահպանումը և արդյունավետ շահագործումը մշտապես գտնվել են ՀՀ Արմավիրի մարզպետի և ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում:

ՀՀ Արմավիրի մարզպետի 28.02.2023թ. թիվ ՄՈ/67- Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը ուսումնասիրում է մարզի ոռոգման համակարգերի նախապատրաստական աշխատանքները, ստուգում է մաքրման և վերանորոգման աշխատանքների վիճակն ըստ բնակավայրերի:

Այս բնագավառում ներկա պահին խնդիրները կապված են գետերում ջրի ելի նվազման և մարզը սնուցող ջրամբարների թերլցվածության հետ:

Հունվար ամսվա ընթացքում արդեն նախապատրաստվել են ջերմոցային տնտեսությունները, ներկրվել է տորֆ, ձեռք է բերվել անհրաժեշտ քանակությամբ բանջարանոցային մշակաբույսերի սերմացու, կարտոֆիլի տնկանյութ և բազմամյա տնկարկների համար արմատակալներ և տնկիներ:

Ներկա դրությամբ մարզում ավարտվել է ապակյա և պոլիէթիլենային թաղանթի տակ ջերմատնային տնտեսություններում ելակի, բանջարեղենի տարբեր տեսակների ցանքի և սածիլների աճեցման աշխատանքները, ինչպես նաև շուրջ 2000 հա պոլիէթիլենային թաղանթի տակ մշակվող վաղահաս բանջարեղենի սածիլների ցանքը: Ավարտվել է բազմամյա տնկարկների էտի, ձևավորման և առաջին բուժման աշխատանքները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կուրս է վերցրել հնարավորինս ամեն ինչ անելու ազգաբնակչության պահանջը տեղական արտադրության գյուղատնտեսական մթերքներով ապահովելու ուղղությամբ, հնարավորինս պակասեցնել մթերքների ներկրումը, ավելացնել մթերքների տեսականու և քանակի արտահանման ծավալները:

Եզրափակելով իր ելույթը, Ա.Այվազյանը նշեց, որ ընթացիկ տարում նույնպես շարունակվում են ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով տրամադրվող աջակցության ծրագրերը:

Անդրադառնալով օրակարգային հարցին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անհրաժեշտ համարեց գյուղատնտեսության ոլորտում ընթացիկ տարվա ընթացքում պլանավորած պետության աջակցության ծրագրերին ազգաբնակչությանը պատշաճ իրազեկելու խնդիրը և առաջարկեց համագործակցել համայնքների ղեկավարների և նրանց աշխատակազմերի հետ, ազգաբնակչությանը հնարավորինս իրազեկելու և տեղեկացված դարձնելու նպատակով:

Օրակարգային երրորդ հարցի՝ ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ զեկույցներով հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիր», «Շենիկ» և «Էջմիածին» ՋՕԸ-ների տնօրենները:

«Արմավիր» ՋՕԸ-ի գործադիր տնօրեն Վ.Արշակյանն իր ելույթում ընդհանուր կարգով նշեց, որ Արմավիր ՋՕԸ-ն փետրվար ամսի երկրորդ տասնօրյակից արդեն սկսել է իր նախապատրաստական աշխատանքները, որի արդյունքում աշխատանքների մոտ 85%-ը կատարված է, իր մեջ ներառելով է ներտնտեսային և միջտնտեսային ջրանցքների մաքրում, վերանորոգում, ծանր տեխնիկայով կատարված աշխատանքներ, մոտ 830 կմ մաքրման աշխատանքներ: Ըստ պլանավորածի ապրիլի 10-ին Արմավիր ՋՕԸ-ն ամբողջությամբ պատրաստ կլինի ոռոգման սեզոնին:

«Շենիկ» ՋՕԸ-ի գործադիր տնօրեն Ս.Սարգսյանը իր ելույթում ընդհանուր կարգով նշեց, որ ընկերությունում փետրվար ամսի 20-ից սկսվել են գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքները: Նախատեսված աշխատանքներից՝

1.Միջտնտեսային ջրանցքներ՝ 12,6 կմ- մաքրվել է 11,76կմ

2.Ներտնտեսային ջրանցքներ՝ 307,2 կմ-մաքրվել է 97,6կմ,որից՝ 63 կմ առվահանով: Առվահանության աշխատանքներին մնացել է մոտ 160-170կմ: Վերանորոգվել են բոլոր տեխնիկական տրանսպորտային միջոցները, վերանորոգվում է 3 պոմպ ,փոխարինվում է 1 պոմպ: Ս.Սարգսյանը նշեց նաև որ համագործակցում են համայնքների ղեկավարների հետ և առաջացող խնդիրների դեպքում փորձում են համատեղ գտնել հնարավոր լուծման ուղիներ, հավաստիացնելով, որ ոռոգման սեզոնը սկսվելուն պես ընկերությունը պատրաստ կլինի ոռոգման աշխատանքներին:

,Էջմիածին ՋՕԸ- գործադիր տնօրեն Ն.Պետրոսյանը իր ելույթում ընդհանուր կարգով նշեց, որ մարտ ամսվա դրությամբ «էջմիածին » ՋՕԸ ընկերությունում գարնան նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում ընկերության կողմից սպասարկվող բոլոր 45 բնակավայրերում:

Մաքրվում և նորոգվում են ներտնտեսային և միջտնտեսային ջրանցքներն ու ջրամատակարարման հանգույցները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ջրանցքների վթարված և քայքայված հատվածների նորոգման աշխատանքներին. աշխատանքները շարունակվում են:

Ձմեռացումից հետո տեղակայվել և մոնտաժվել են 107 խորքային հորերի պոմպային ագրեգատներն ու տրանսֆորմատորները: Իրականացվում են խորքային հորերի էլ. վահանակների և էլ. սարքավորումների վերազինում պաշտպանիչ ու կանխարգելիչ սարքավորումներով, լրացվում են տրանսֆորմատորների յուղերը:

Մրցութային կարգով իրականացվում են ՋՕ ընկերության խորքային հորերի պոմպային ագրեգատների նորոգումները, որոնց պատրաստ լինելու և համապատասխան փորձարկումներից հետո անմիջապես կտեղակայվեն համապատասխան բնակավայրերում:

Փետրվար ամսին արագացված ձևով կազմակերպվել և նորոգվել են ՋՕ ընկերության մեքենա-մեխանիզմները, որոնք ներկայումս աշխատում են ամենաբարդ և խնդրահարույց տարածքներում:

Ընկերությունը ընթացիկ տարվա սկզբից սկսել է պատրաստվել ոռոգման սեզոնին, քննարկվել և ճշտվել են բոլոր ներտնտեսային և միջտնտեսային ցանցերում իրականացվելիք աշխատանքների ծավալներն ու առաջնահերթությունները:
Արդյունքում կատարվում են **717,03 կմ** միջտնտեսային – ներտնտեսային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքներ ձեռքով ու մեխանիզմով, որից **14,6 կմ** միջտնտեսային, իսկ **510 կմ**՝ ներտնտեսային ցանցերի վրա:

32,4 կմ բետոնային հուների և կիսախողովակների տարբեր հատվածներում կատարվում են նորոգման աշխատանքներ: Սպասարկվող **169** խորքային հորերից **70** խորքային հորերի վրա իրականացվում են վերականգնման ու նորոգման տարբեր տեսակի աշխատանքներ: Շահագործվող **22 պոմպակայաններում** իրականացվում են ընթացիկ նորոգման – կարգաբերման աշխատանքներ, որոնք կկատարվեն նախատեսված ժամկետում: Դրական համարելով այն, ճաստը,որ ավելացել են մշակվող հողատարածքները և հաշվի առնելով այս տարվա եղանակային պայմանները, Ն.Պետրոսյանը հավաստիացրեց,որ կարվի ամեն ինչ,որպեսզի ջրամատակարարումը իրականացվի բավարար չափով:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով վերը նշված ՋՕԸ-ների գործադիր տնօրենների կողմից ներկայացված տեղեկատվությանը մարզի տարածքում գործող ՋՕԸ-ների կարևորագույն խնդիրը համարելով առկա խնդիրների ժամանակին լուծումը,անհրաժեշտ համարեց ընթացիկ տարում բավարար չափով ջրամատակարարման ապահովումը:

Օրակարգային չորրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2023 թվականի առաջին եռամսյակի բյուջեներով պլանավորած սեփական եկամուտների հավաքագրման և այդ ուղղությամբ համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ ելույթ ունեցավ ՀՀ Արմավիրի

մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը: Նա ներկայացրեց որ 2023թ 1-ին եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների պլանավորումը կազմել է 3609648.0 հազ.դրամ՝ 2022 թվականի 1-ին եռամսյակին պլանավորված 2709578.1 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 900069.9 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 2918174.2 հազ. դրամ , 2022 թվականի 1-ին եռամսյակին հավաքագրված 2206012.4 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 712161.9 հազ. դրամով, կատարվել է 80.8%-ով, նախորդ տարվա 81.4%-ի համեմատ:

28.03.2023թ 1-ին եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների պլանավորումը կազմել է 890612.2 հազ.դրամ՝ 31.03.2022 թվականի 1-ին եռամսյակին պլանավորված 982999.2 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 92387.0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 935645.1 հազ. դրամ , 31.03.2022 թվականի 1-ին եռամսյակին հավաքագրված 749678.3 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 185966.9 հազ. դրամով, կատարվել է 105.1%-ով, նախորդ տարվա 76.3%-ի համեմատ:

2022թվականի 1-ին եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշ ունեն՝

1.Փարաքար համայնքը՝ պլանավորված 168296.0 հազ. դրամի փոխարեն հավաքագրվել է 123863.0հազ. դրամ կամ 73.6%

2. Ֆերիկ համայնքը՝ պլանավորված 1407.9 հազ. դրամի փոխարեն հավաքագրվել է 573.3 հազ. դրամ կամ 40.7 %

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով ներկայացված տեղեկատվությանը, նշեց որ չնայած դեռ չի ավարտվել առաջին եռամսյակը, սակայն մարզի սեփական եկամուտների հավաքագրված տվյալները առավել քան լավ են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 185 մլն դրամով ավելի է, իսկ մարզի ընդհանուր եկամուտները 712 մլն դրամով ավելի է, մարզպետը փաստեց, որ ունենք փաստացի աճ և արդյունքները ցույց են տալիս, որ գործընթացները ընթանում են ճիշտ պլանավորվածով և մարզի համայնքների և

վարչական ղեկավարներին առաջարկեց նույն տեմպերով և պատասխանատվությամբ շարունակել հավաքագրման աշխատանքները:

Օրակարգային հինգերորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2022 թվականի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տեղական ծրագրերի կատարման և 2023 թվականի նախանշված ծրագրերի մասին զեկույցներով հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանը, Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը, Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանը, Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանը, Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանը, Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանը, Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանը, Ֆերիկ համայնքի ղեկավար՝Ռուստամ Հասանյանը:

Համայնքների ղեկավարները իրենց ելույթներով ընդհանուր կարգով զեկուցեցին համայնքներում իրականացված, ընթացքի մեջ գտնվող և առաջիկայում իրականացվող բազմաթիվ ծրագրերի մասին, որոնք վերաբերում էին նախադպրոցական հաստատությունների կառուցմանն ու վերակառուցմանը, բնակավայրերի փողոցների կառուցմանն ու նորոգմանը, խմելու ջրամատակարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգերի կառուցմանն ու նորոգմանը, այգիների և պուրակների կառուցմանն ու բարեկարգմանը, մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերմանը, գազաֆիկացմանը, փողոցային լուսավորությանը, աղբահանության և սանմաքրման ոլորտին, բազմաբնակարան շենքերի տանիքների վերակառուցմանը, արևային կայանների կառուցմանը, որոնք իրականացվել և իրականացվելու են և համայնքային միջոցներով և սուբվենցիոն ծրագրերով:

Օրակարգային վեցերորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության դատախազության Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազի 2023 թվականի փետրվարի 13-ի թիվ 68/3301-2023 գրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ ուղարկված միջնորդագիրը: Ա.Լալայանը ներկայացնելով ՀՀ զինվորական դատախազության կողմից Արմավիրի մարզպետին հասցեագրված թիվ 58203221 քրեական վարույթով հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու

ուղղությամբ միջնորդագիրը, նշեց ըստ միջնորդագրի՝ քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմով պայմանավորված, ՀՀ կառավարության կողմից նույն օրը ՀՀ ամբողջ տարածքում հայտարարված ռազմական դրության և ընդհանուր զորահավաք կազմակերպելու և իրականացնելու որոշման հիման վրա, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանման կողմից 2020 թվականի հոկտեմբերին ՀՀ Արմավիրի մարզի **Այգեշատ, Հայթաղ, Արագած, Ոսկեհատ և Մրգաստան** համայնքներում հաշվառված **վեց** զինապարտների ուղարկվել են զորահավաքային զորակոչի ներկայանալու վերաբերյալ համապատասխան ծանուցագրեր:

Նշված համայնքների ղեկավարները, հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմիններում մշտապես կազմակերպական-տնօրինչական, վարչարարական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք, կազմել և ՀՀ ՊՆ հիշյալ ստորաբաժանմանն են հանձնել իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հավաստող, կեղծ բովանդակությամբ պաշտոնական փաստաթղթեր՝ իբրև թե հիշյալ վեց անձինք բացակայել են Հայաստանի Հանրապետությունից, ինչը չի համապատասխանել իրականությանը:

Քննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ նշված համայնքներում հաշվառված **վեց** զինապարտները իսկապես չեն ծանուցվել զորահավաքային զորակոչի ներկայանալու վերաբերյալ, դրանից չեն խուսափել, ուստի նրանց նկատմամբ որոշումներ են կայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Ինչ վերաբերում է համայնքի ղեկավարների և աշխատակազմի քարտուղարների արարքներին, ապա նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ վերջիններս պաշտոնեական կեղծիք չեն կատարել, այլ փաստացի իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ պարունակող վերը նշված տեղեկանքները կազմել են իրենց ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունք դրսևորելու հետևանքով:

Անդրադառնալով համայնքի ղեկավարների և աշխատակազմի քարտուղարների պաշտոնեական անփութություն կատարելուն նպաստող հանգամանքներին՝ հարկ է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն.

1. Համայնքի ղեկավարը պաշտպանության կազմակերպման բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) ***օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ.***

2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը, ինչպես նաև տարածքային պաշտպանության և ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման միջոցառումներին.

3) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվություն է տրամադրում տարածքային զինվորական կոմիսարիատին:

Մինչդեռ նախաքննության ընթացքում պարզվել է, որ վերը թվարկված համայնքներում օրենքով սահմանված կարգով չեն վարվել զինապարտների գրանցամատյաններ, նրանց վերաբերյալ սպառիչ ցուցակներ, ինչպես նաև աշխատանքի ընդունման և ազատման վերաբերյալ տվյալների հաշվառումով զինապարտների տվյալները չեն թարմացվել և ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում հստակեցված տեղեկատվություն չի տրամադրվել:

Հարկ է նշել, որ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի ուժով մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը 7-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել իր նոր կացարանի հասցեն: Այս պարտականության չկատարումը առաջ է բերում վարչական պատասխանատվություն

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 195.1-րդ հոդվածով:

Վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում անհրաժեշտ խստորեն պահպանել ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն որոշման 15-րդ կետի պահանջները՝ զինապարտների զինվորական հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններում վարել համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ գրանցամատյան և գործուն միջոցներ ձեռնարկել մշտական բնակության վայրը փոխող անձանց, մասնավորապես պահեստազորայինների վերաբերյալ տվյալների պատշաճ հաշվառումն ապահովելու ուղղությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց անձնական պատասխանատվությամբ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում բացառել նմանօրինակ թերացումները և նշված ոլորտում պատշաճ իրականացնել օրենսդրությամբ սահմանված իրենց գործառույթները:

Օրակարգային յոթերորդ հարցի՝ Հողօգտագործման և ընդերքօգտագործման բնագավառներում ՀՀ Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների, ինչպես նաև իրավապահ և ոլորտներում ներգրավված իրավասու մարմինների համագործակցության մասին ելույթով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանը:

Վահան Սարգսյանը իր ելույթում նշեց, որ շատ կարևոր են այս ձևաչափով հանդիպումները, քանի որ դրանք հնարավորություն են տալիս պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ օպերատիվ համագործակցելու և որոշ հարցերի վերաբերյալ դատախազության դիքորոշումները և նկատառումները բարձրաձայնելու այդ գործընթացում ակնկալելով ՀՀ Արմավիրի մարզպետի աջակցությունը: Վահրամ Սարգսյանը փաստեց, որ հողօգտագործման և ընդերքօգտագործման ոլորտում կատարված հանցագործությունների դեպքերը ՀՀ Արմավիրի մարզում նախորդ տարվա համեմատությամբ բավականին ավելացել են : Նա նշեց, որ ընդերքը օրենսդրորեն ճանաչված է պետության բացառիկ սեփականություն, հետևաբար պետության բացառիկ սեփականությունը պահպանելու հարցում, իսկ ընդերքօգտագործման

կանոնները խախտելու յուրաքանչյուր դեպքում, բոլորիս պարտավորությունը պետք է լինի դրան արագ արձագանքելու և մեր լիազորությունների ամբողջ գործիքակազմը օգտագործելու, նմանատիպ հանցագործությունների դեմ պայքարելու համար: Նման հանցագործություններով ոչ միայն պետությանը պատճառվում է գույքային կամ այլ էական վնաս, այլ նաև դրանց դեմ չպայքարելն ու անտարբեր լինելը տարիներ անց եթե ոչ միայն, ներկա ապա նաև ապագա սերունդների համար ունենալու են անդառնալի արդյունքներով հետևանքներ: Բնականաբար պայքարի բեռը իրենց վրա են վերցրել իրավապահ մարմինների աշխատակիցները, սակայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից այս առումով համագործակցության ակնկալիքները մեծ են: Ավելին, համայնքների ղեկավարները, եթե ոչ օրենսդրորեն իրենց լիազորությունների շրջանակներում, ապա առնվազն որպես ՀՀ քաղաքացի և պետության մասին մտահոգ յուրաքանչյուր համայնքի ղեկավարի պայքարը պետք լինի է այս հարցում, քանի որ յուրաքանչյուր ապօրինի ընդերքօգտագործման դեպք վնաս է պատճառում մեր պետությանը և տվյալ համայնքին: Ուստի այս առումով ակնկալվում է համայնքների ղեկավարների աջակցությունը պետության բացառիկ սեփականություն հանդիսացող ընդերքի նկատմամբ ոտնձգության յուրաքանչյուր դեպքով անհանդուրժող լինել և իրավապահ մարմինների հետ արդյունավետ համագործակցել: ՀՀ Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանը ամփոփելով իր ելույթը նշեց, որ պետությանը պատճառված վնասների դեպքերը դատախազության կողմից առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են և այս ոլորտում ակնկալվում է յուրաքանչյուրի աջակցությունը և համագործակցությունը:

Ամփոփելով օրակարգային հարցերի քննարկման արդյունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նախանշեց այն կարևորություններն ու առաջնային նպատակները, որոնք իրենց մեջ ներառում են համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը, տարածաշրջանում ենթակառուցվածքների զարգացումը, ներկայացված բազմաթիվ սուբվենցիոն ծրագրերի առկայությունը, որի հնարավորությունը ունեցանք հատկապես համայնքների խոշորացումից հետո և մեզանից կախված ամեն հնարավորը պետք անենք, որպեսզի ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի, համայնքների ղեկավարների և վարչական ղեկավարների ամենօրյա սրտացավ մոտեցման և հետևողական աշխատանքի շնորհիվ

ունենանք ցանկալի և լավ արդյունքներ և շարժվելով առաջ, հաղթահարել բոլոր դժվարություններն ու խնդիրները՝ աջակցելով միմյանց և իրավապահ մարմիններին՝ մեր պետությանը պաշտպան և սատար լինելու և պետության սեփականությունը պաշտպանելու գործում:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 04.04.2023 10:32:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝ **ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Արձ.՝ Մ.Առուշանյան